

ՍՈՒՐԱԹԻ ՍՐՃԱՆՈՅԸ

(Ը․ ՏՈԼՍՏՈՅ)․

Հնդկաստանի Սուրաթ քաղաքում մի սրճանոց կար, ուր ամեն կողմերից անցորդներ և օտարականներ հաւաքւում էին և շատ անգամ միմեանց հետ զրոյց էին անում:

Մի անգամ այդ տեղ մտաւ մի պարսիկ գիտնական աստուածաբան: Նա իր ամբողջ կեանքում ուսումնասիրում էր Աստուածութեան էութիւնը, և կարդում էր, և գրում էր այդ մասին գրքեր: Նա Աստուծու մասին այնքան շատ մտածում, կարդում և գրում էր, որ նրա գլխի մէջ ամեն ինչ շփոթեցաւ, և այն աստիճանին հասաւ, որ նա դադարեց այլևս Աստուծուն հաւատալուց:

Պարսից թագաւորն այդ մասին իմանալով, նրան իր թագաւորութիւնից արտաքսեց:

Այսպէս, դժբաղդ աստուածաբանն իր ամբողջ կեանքում խորհելով Նախապատճառի մասին մոլորուեցաւ, և, փոխանակ հասկանալու, որ արդէն իր բանականութիւնը խանգարուած է, սկսեց մտածել՝ թէ տիեզերքը կառավարող բարձր բանականութիւնից մեծ բան չկայ:

Այս աստուածաբանը մի ավերիկեցի ստրուկ ունէր, որ նրան ամեն տեղ հետեւում էր: Երբ աստուածաբանը մտաւ սրճանոցը, ավերիկեցին մնաց դուրս՝ դռան ետեւը և նստեց քարի վրայ տաշակող արևի տակ և իւր վրայից ճանճերն էր քշում: Իսկ ինքն աստուածաբանը պատուիրեց իր համար մի բաժակ ափիոն: Երբ նա բաժակը պարպեց և ափիոնը նրա ուղեղը սկսեց ցնցել, նա դիմեց իր ստրկին.

— Ի՞նչ է, արհամարհուած ստրուկ, ասաց աստուածաբանը, — ասա ինձ, ի՞նչպէս ես դու մտածումս կայ Աստուած թէ ոչ:

— Ի հարկէ, կայ, ասաց ստրուկը և խօսոյն իր գօտու միջից հանեց փայտեայ փոքրիկ կուռք:— Ահա—ասաց ստրուկը,— ահա այն աստուածը, որ ինձ ծնուածս օրից պահում է: Այս Աստուածը շինուած է այն սրբազան ծառի ճիւղից, որին մեր երկրում ամենքն էլ երկրպագութիւն են մատուցանում:

Աստուածաբանի և տորիի միջև եղած այս խօսակցութիւնը օրճանոցում եղողները լսեցին և զարմացան:

Նոցա զարմանալի երևաց տիրաջ հարցմունքը, և աստուածաբանալի ստրկի տուած պատասխանը:

Մի բրամին, լսելով ստրկի խօսքերը, գիմեց նրան և ասաց. — Թշուառ անմիտ, մի թէ կարելի է մտածել, որ Աստուած գոնուի մարգու գօտու մէջ: Աստուած մի է — Բրամա, եւ այս Բրաման տէրոյն տիեզերքից մեծ է, որովհետեւ նա ստեղծեց ամբողջ տիեզերքը: Բրաման է միակ բարձր Աստուած, այն Աստուածը, որին կառուցուած են տաճարներ Գանգէս գետի ափերի վերայ. այն Աստուածը, որին սպասաւորում են Նրա միակ քրմերը — Բրամինները: Միայն այս քրմերը գիտեն ճշմարիտ Աստուծուն: Արգէն անցաւ քսան հազար տարի, և ինչքան էլ յեղափոխութիւն լինի աշխարհի մէջ, այնուամենայնիւ այս քրմերը միշտ միեւնոյնը կմընան, ինչպէս որ ընդ միշտ էին, որովհետեւ բրաման, միակ և ճշմարիտ Աստուածը, նոցա հովանաւորում է:

Այգպէս ասաց բրամինը, կարծելով համազել բոլորին, բայց այնտեղ լինելով մի հրէայ (սեղանաւոր) լուսնայտփոխ, ասաց նրան.

— Ո՛չ: Ճշմարիտ Աստուծու տաճարը Հնգկաստանում չէ... Եւ Աստուած չէ հովանաւորում բրամինների դասակարգին: Ճշմարիտ Աստուածը՝ ոչ թէ բրամինների Աստուածն է, այլ Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը: Եւ ճշմարիտ Աստուածը հովանաւորում է միայն Իսրայէլեան ազգին: Աստուած աշխարհիս սկզբից չէ գաղարած մեր ազգը սիրելուց: Եւ եթէ այժմս մեր ազգը ցրուած է երկրիս վերայ, այս միայն փորձելու և խրատելու համար է. Աստուած, ինչպէս որ խոստացել է, նորից

իր ժողովուրդը կը ժողովէ երուսաղէմում, որպէս զի հնութեան հրաշալիքը, երուսաղէմի տաճարը վերականգնելուի խրայէլին բաւոր ազգերի վերայ տէր և իշխան կարգէ:

Այսպէս ասաց հրէայն և սկսեց արտասուել: Նա ուզեց իր խօսքը շարունակել, բայց այն տեղ եղող իտալացին նրան ընդհատեց:

— Դուք ճշմարիտը չէք ասում— ասաց իտալացին հրէային:— Դուք Աստուծոն անարդարութիւն էք վերագրում: Աստուած չէ կարող մի ազգ միւսներին աւելի սիրել: Ընդհակառակն, Նա եթէ խրայէլին հովանաւորում էր, արդէն այն ժամանակից 1800 տարի է անցել, որ Աստուած խրայէլի վերայ բարկացել է և իր բարկութեան նշանը ցոյց տուեց նրանով, որ նա այդ ազգի գոյութիւնը դադարեցրեց՝ ցրուելով նրան աշխարհիս ամեն կողմերում, այնպէս որ, այս հաւատքը ոչ թէ միայն տարածւում է, այլ միայն այս և այն տեղ է մնում: Աստուած ոչ մի ազգ՝ մինը միւսին նախամեծար չէ համարում, այլ նոցա բոլորին, որոնք որ փրկուել են ուզում, կանչում է հռովմէական—կաթոլիկական եկեղեցու ծոցը, որից դուրս ոչ մի փրկութիւն չկայ:

Այսպէս ասաց իտալացին: Սակայն այն տեղ եղող բողոքական պատուիր դեղնելով, պատասխանեց կաթոլիկ միսիոնարին.

— Ինչպէ՞ս էք համարձակում ասել, թէ փրկութիւնը միայն ձեր դաւանանքի մէջ կարելի է գտնել: Իմացէք, որ փրկուել կարող են միայն նոքա, որոնք ըստ Աւետարանի, կը ծառայեն Աստուծոյ հոգւով և ճշմարտութեամբ Յիսուսի օրէնքին համեմատ:

Այն ժամանակ, Սուրբի մաքսատան մէջ ծառայող մահմետականը, որ այն տեղ նստած ծխում էր, մի խրոխտ դէմքով դիմեց այն երկու քրիստոնեաներին:

— Ի դուր գուք այդպէս էք համոզուած ձեր հռովմէական հաւատքի մէջ, — ասաց նա: — Ձեր հաւատքին արդէն մօտ վեց հարիւր տարի առաջ փոխանակած է Մահմետի ճշմարիտ հաւատքը: Եւ ինչպէս ինքներդ տեսնում էք, Մահմետի ճշմարիտ հաւատքը հետզհետէ տարածւում է Եւրոպայում, Ասիայում և մինչև անգամ Չինաստանում: Դուք, ինքներդ խոստովանում էք, որ հրէա-

ները մերժուած են Աստուծուց, և այս բանին ապացոյց էք բերում այն, որ հրէաներն անարգուած են և նոցա կրօնը չէ տարածուում: Ընդունեցէք Մահմետի կրօնի ճշմարտութիւնը, որովհետեւ նա բոլորից վսեմ է և անդադար տարածուում է: Միայն նոքա կարող են փրկուել, որոնք որ կը հաւատան Աստուծու վերջին մարգարէ Մահմետին: Եւ այն ևս միայն Օմարի հետեւողները, և ոչ թէ Ալիներ, որովհետեւ Ալիի հետեւողները անհաւատ են:

Այս խօսքերի միջոցին պարսիկ աստուածաբանը, որ Ալիի ազանդին էր պատկանում, ուզեց պատասխանել: Սակայն այդ միջոցին սրճանոցում մեծ աղմուկ բարձրացաւ այնտեղ եղող բոլոր այլադաւան օտարականների մէջ: Այնտեղ կային հաբեշստանցի քրիստոնեաներ, հնդկաց լամաներ, իսմայէլացիներ, և կրակապաշտներ:

Բոլորն էլ վիճում էին Աստուծու էութեան մասին և այն բանի մասին՝ թէ ինչպէս պէտք է նրան պաշտել: Ամեն մինը հաստատում էր, որ միայն նրա երկրում ճանաչում են ճշմարիտ Աստուծուն և իմանում են՝ թէ ինչպէս պէտք է նրան պաշտել:

Բոլորն էլ վիճում և աղմուկ էին հանում: Միայն այնտեղ մի չինացի կոնֆուկիոսի աշակերտ նստած էր հանդարտ սրճանոցի մի անկիւնում և վէճի մէջ չէր մտնում: Նա թէյ էր խմում լսում էր, ինչ որ ասում էին, բայց ինքն լռում էր:

Մահմետականը վէճի միջոցին նրան նշմարելով, դիմեց նրան և ասաց.

— Դու գոնէ իմ կողմս պահիր, բարի չինացի: Դու լռում ես, բայց դու կարող ես իմ օգտին մի բան ասել: Ես գիտեմ, որ ներկայումս ձեզանում՝ Չինաստանի մէջ զանազան դաւանութիւններ են մտցնում: Ձեր վաճառականները շատ անգամ ինձ ասել են, որ ձեր չինացիները միւս բոլոր կրօններից մահմետական կրօնն ամենալաւն են համարում և սիրով ընդունում են նրան: Իմ խօսքերս պաշտպանիր և ասա՛, որ դու մտածում ես ճշմարիտ Աստուծու և նրա մարգարէի մասին:

— Այո՛, այո՛, ասա՛ ինչ որ դու մտածում ես, — դիմեցին նրան միւսները:

Զինացին, Կոնֆուկիոսի աշակերտը, փակեց աչքերը, մտածեց և յետոյ բաց անելով, հանեց ձեռքերը վերարկուի միջից, դրեց կրծքի վերայ և սկսեց հանդարտ ու հանգիստ ձայնով խօսել:

— Պարոններ, — ասաց նա, — ինձ թւում է, որ մարդկան ինքնասիրութիւնն ամենից աւելի արգելք է լինում նոցա՝ հաւատի գործի մէջ համաձայնելու: Եթէ դուք նեղութիւն կը քաշէք ինձ խելու, ես ձեզ այս կը բացատրեմ օրինակով:

Ես Զինաստանից դուրս եկայ Սուրաթ անգլիական շոգենաւով, որ աշխարհիս շուրջը պտտել էր: Ճանապարհին մենք Սումատրա կղզու արեւելեան ափերի մօտ կանգ առանք ջուր վերցնելու համար: Կէսօրին դուրս եկանք ցամաքը և նստեցինք հնդկաբնակուղենու ստուերի տակ, կղզու բնակիչների գիւղից ոչ շատ հեռու: Մեր մէջ կային զանազան երկրներից մարդիկ:

Մինչ մենք նստած էինք, մեզ մօտ եկաւ մի կոյր: Այս մարդը կուրացել էր, ինչպէս որ յետոյ իմացանք, նրանից, որ երկար ժամանակ և յամառ կերպով արեւի վերայ նայել էր, իմանալու համար թէ արեւը ինչ բան է, որպէս զի նրա լուսին իշխէ:

Նա երկար ժամանակ սրա յետեւից ընկաւ, բոլոր գիտութիւնները գործ դրեց, կամենում էր արեւի մի քանի ճառագայթներ բռնել, և շիշի մէջ փակել: Նա երկար չարչարուելուց յետոյ ոչինչ չկարողացաւ անել, բայց եթէ արեւին շարունակ նայելուց աչքերը կուրացրեց:

Այն ժամանակ նա ինքն իրեն ասաց.

— Արեւի լոյսը հեղուկ մարմին չէ, որովհետեւ եթէ նա հեղուկ լինէր, այն ժամանակ կարելի էր ածել մի որ և է ամանի մէջ և նա հողմից կը տատանուէր այնպէս, ինչպէս ջուրը: Արեւի լոյսը նոյնպէս կրակ չէ, որովհետեւ եթէ նա կրակ լինէր, կհանգչէր ջրի մէջ. նա ոգի չէ, որովհետեւ տեսանելի է, մարմին էլ չէ, որովհետեւ նրանով չէ կարելի շարժել. հետեւաբար եթէ արեւի լոյսը ոչ կարծր և ոչ հեղուկ մարմին է, ուրեմն ոչինչ բան է:

Այդպէս նա դատում էր շարունակ նայելով արեւի վերայ, որով և կորցրեց թէ տեսողութիւնը և թէ խելքը:

Երբ նա բոլորովին կտրացաւ, այն ժամանակ կատարելապէս համոզուեցաւ այն բանի մէջ, որ արեւը չկայ:

Այս կայրին մտաեցաւ նրա ստորուկը: Նա նրան նստացրեց հընդ-կարնկուղենու ստուերի տակ, վեր առաւ գետնից հնդկարնկոյցը և նրանից շինեց կանթեղ, ընկուղի թելերից պտորոյգ պտորաս-տեց, ընկուղից իւղ հանեց և նրա մէջ պտորոյգը թաթա-խեց:

Մինչ ստորուկը շինուի՞ր իր կանթեղը, կոյրը, հաւաքելով ա-սաց նրան — է՛հ, ստորուկ, չէ՞ որ ես ճիշտն ասացի, որ արեւ չկայ, տեսնու՞մ ես, ինչ մակթն է: Բայց ասում են՝ թէ արեւ կայ... ստկայն ի՞նչ բան է արեւը:

Իսկ ես չեմ իմանում, թէ ինչ բան է արեւը — ասաց ստորու-կը: — Ես նրա հետ գործ չունիմ: Բայց ահա լոյսը գիտեմ: Ահա ես շինեցի կանթեղ և ի՞նչ լոյս կտայ, քեզ ևս նրանով կարող եմ ծառայել և վրանի մէջ ամեն բան գտնել:

Ստորուկը վեր առաւ ձեռին ընկուղի կձեպը և ասաց՝ ահա իմ արեւը: Այն տեղ նստած էր մի կաղ, որ այս լսելով ծիծաղեց:

— Դու, երեւում է, ի ծնէ կոյր ես, — ասաց նա կոյրին, որ չես իմանում թէ ինչ է արեւը: Ես քեզ կասեմ թէ նա ինչ է. նա է մի հրագունդ, որ ամեն օր ծովից դուրս է գալիս և ամեն ե-րեկոյ մեր կղզու սարերի ետեւը մայր է մտնում: այս մենք բոլորս տեսնում ենք. դու ևս կը տեսնէիր, եթէ որ տեսողութիւն ու-նենայիր:

Այն տեղ նստող ձկնորսը լսեց այս խօսքերը և ասաց կաղին. — Երեւում է, որ դու քո կղզուց դուրս ոչ մի տեղ եղած չես, եթէ կաղ չի՞նէիր և ծովի վերայ ման եկած լի՞նէիր, կիմանա-յիր, որ արեւը, ոչ թէ մեր կղզու սարերի ետեւը մայր է մտնում, այլ ի՞նչպէս որ ծովից դուրս է գալիս, այնպէս ևս երեկոյեան ծովի տակ է մտնում: Ես ճիշտ եմ ասում, որովհետեւ ամեն օր այս աչքովս եմ տեսնում:

Լսեց այս հեղիկը:

— Զարմանում եմ, — ասաց նա, — ի՞նչպէս կարող է խելօք մարդ այդպիսի յիմար բաներ ասել: Մի՞թէ հնարաւոր է, որ հրագուն-

զը ջրի մէջ իջնի և չհանգլի: Արևը բնաւ հրագունդ չէ, նա է Աստուածութիւն: Այս Աստուածութիւնը կոչուում է Դելա: Այս Աստուածութիւնը կառքով ման է գալիս երկնքի մէջ Սպերուիեա սարի շուրջը:

Պատահում է, որ չար օձեր՝ Բագու և Կետու յարձակում են Դելայի վերայ և նրան կռւել են տալիս, այն ժամանակ լինում է մոլոր: Բայց մեր քրմերն աղօթում են այն բանի մասին, որ Աստուածութիւնն ազատուի, և ազատւում է: Միայն ձեզ նման անկիրթ մարդիկ, որոնք ոչ մի տեղ գնացած չեն, կարող են ասել՝ լի է արևը միայն իրենց կղզին է լուսաւորում:

Այն ժամանակ սկսեց խօսել եգիպտական նաւի տէրը:

— Ո՛չ, ասաց նա, — այդ ևս ուղիղ չէ, արևը Աստուածութիւն չէ և միայն Հնդկաստանի և Նրա ոսկէ սարի շուրջը չէ մանգալիս: Ես շատ եմ ման եկել թէ Սև ծովի և թէ Արաբիոյ ափերի վրայով, եղած եմ նաև Մադակասքարի և Փիլիպպեան կղզիների վերայ, — արևը լուսաւորում է ամբողջ երկիրը և ոչ թէ միայն Հնդկաստանը, նա չէ պտտում մի սարի շուրջը, բայց նա դուրս է գալիս ձափոնիայի կղզիների մօտ, ուստի և այն կղզիները կոչուում են ձափէն, որ նոցա լեզուով նշանակում է ծնունդ արևի, և մայր է մոնում հեռու, հեռու անգլիական կղզիների ետևը: Ես այս շատ լաւ գիտեմ, որովհետև ես ինքս աչքովս շատ տեսել եմ և շատ էլ լսել եմ պոպից: Իսկ պապս ման է եկած մինչև ծովի ամենավերջին ծայրերը:

Նա կամենում էր էլի խօսել, բայց մեր նաւի անգլիական նաւաստին նրան ընդհատեց:

— Այ մի երկիր չկոյ, բացի Անգլիայից, — ասաց նա, — ուր աւելի լաւ իմանային, թէ ինչպէս է արևը պտտում: Անգլիայում, մենք բոլորս գիտենք, որ արևը ոչ մի տեղից չէ ծագում և ոչ մի տեղ մայր չէ մոնում, այլ նա անգագար պտտում է երկրի շուրջը: Մենք այս շատ լաւ գիտենք, որովհետև ինքներս ամբողջ երկրի շուրջը պտտել ենք և ոչ մի տեղ արևին չընդհարուեցինք: Ամեն տեղ նա առաւօտեան երևում է և երեկոյեան ծածկւում է:

Անգլիացին վեր առաւ գաւազան, շրջանագիծ քաշեց աւաղի

վերայ և սկսեց բացատրել, թէ ինչպէս արեւը պատուած է երկնքում երկրիս շուրջը: Բայց նա չկարողանալով լաւ բացատրել, մատնացոյց արեց իր նաւաւարի վերայ և ասաց.

— Նա ինձանից խելօք է և աւելի լաւ կը բացատրէ ձեզ այս բոլորը:

Նաւաւարը հասկացող մարդ էր, լռութեամբ լսում էր խօսակցութիւնը, քանի որ նրան չէին հարցնում: Իսկ այժմս, երբ բոլորը նրան գիմեցին, նա սկսեց խօսել և ասաց.

— Դուք ամենքդ միմեանց խաբում էք և ինքներդ էլ խաբւում էք: Արեւը չէ շրջում երկրիս շուրջը, այլ երկիրս ինքն շրջում է արեւի շուրջը և ինքն էլ դառնում է իրեն վերայ, դարձնելով արեւի շուրջը 24 ժամուայ մէջ թէ ճալիսնիա, թէ Փիլիպպեան կղզիները, թէ Սումատրան, որի վերայ մենք ապրում ենք, թէ Ափրիկան, թէ Եւրոպան, թէ Ասիան և թէ ուրիշ բազմաթիւ երկիրները: Արեւը չէ լուսաւորում միայն մի սարի, մի կղզու, և մինչև անգամ ոչ էլ մի երկրի համար, այլ այդպիսի շատ մոլորակների համար, ինչպէս որ երկիրս է: Այս ամենը ձեզանից ամեն մինը կարող էր հասկանալ, եթէ որ նայէր վերև՝ երկնքի վերայ և ոչ թէ իր ոտքի տակ և չմտածէր միայն՝ թէ արեւը միայն նրա կամ նրա հայրենիքի համար է լուսաւորում:

Այդպէս ասաց իմաստուն նաւաւարը, որ աշխարհիս վերայ շատ էր ման եկել և վերև՝ երկնքին շատ էր նայել:

— Այս, շարունակեց չինացին, Կոնֆուկիոսի աշակերտը, ինքնասիրութիւնից են յառաջ գալիս մարդկան մոլորութիւնները և անհամաձայնութիւնները կրօնի մէջ:— Ինչ որ արեւի հետ է լի՝ նուա՛նոյնը և Աստուծու հետ: Ամեն մի մարդ կուզէ, որ ինքն ունենայ իր սեփական Աստուածը, կամ գոնէ իր հայրենիքի Աստուածը, Ամեն մի ազգ կուզէ փակել իր տաճարում Նրան, Որին ամբողջ տիեզերքը ընդգրկել չէ կարող:

Եւ կարող է արդեօք մի որ և է տաճար համեմատւել այն բանի հետ, որը ինքն Աստուած կառոյց, որպէս զի միացնէ նրա մէջ բոլոր մարդկան մի դաւանանքով և մի կրօնով:

Բոլոր մարդկան տաճարները կառուցուած են այս տաճարի — Աստուծու տիեզերքի օրինակի համեմատ: Բոլոր տաճարներում կան գմբեթներ, կամարներ, ջաշեր, պատկերներ, արձանագրութիւններ, օրինաց գրքեր, զսհեր, սեղաններ և քահանաներ: Ո՞ր տաճարում կայ երկնակամարի նման կամար, արևի, լուսնի և աստղերի նման ջաշեր, միմեանց սիրող և օգնող մարդկանց կենդանի պատկերների նման պատկերներ: Ո՞ւր կան արգեօք Աստուծու բարութեան մասին այնքան հասկանալի արձանագրութիւններ, ինչպէս այն բարեգործութիւնները, որոնք ամեն տեղ ցրուած են Աստուծուց մարդկան երջանկութեան համար: Ո՞ւր է այնպիսի մի օրինագիրք, որ այնքան պարզ լինի ամեն միմին, ինչպէս այն գիրքը, որ գրուած է մարգուտ սրտի մէջ: Ո՞ւր են արգեօք մարդկան իրենց մերձաւորների համար մատուցած անձնուրացութեան զօհերի նման զօհերը: Եւ ո՞ւր է արգեօք բարի մարդու սրտի նման սեղանը, որի վերայից ինքն Աստուած զոհ է ընդունում:

Մարդս ինչքան բարձր է հասկանում Աստուծուն, այնքան աւելի լաւ է ճանաչում Նրան: Իսկ ինչքան լաւ է ճանաչում Աստուծուն, այնքան աւելի լաւ կը մօտենայ Նրան, նայելու Նրա բարութեան, գթասրտութեան և սիրոյն առ մարդիկ:

Աստի և թո՛ղ նա, որ ամբողջ տիեզերքը լեցնող արևի լոյսն է տեսնում, չգատի և չարհամարհէ այն սնահաւատ մարդուն, որ իր կռքի մէջ է տեսնում այն լոյսի միայն մի ճառագայթը, թող չնախատէ նաև այն անհաւատին, որը կուրացու և բուրովին լոյսը չէ տեսնում:

Այսպէս ասաց Չինացին, Կոնֆուցիոսի աշակերտը. և սրճանոցում բոլոր ներկայ եղողները լսեցին և այլևս չվիճեցին այն բանի մասին, թէ ո՞րի կրօնն է աւելի լաւ: